ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
## 2023-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ
# ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի տնտեսական զարգացման և ծրագրերի պատասխանատուի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար՝ Ա. Ներսիսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու՝ 17.02.2023թ. թիվ10-Ն որոշմամբ

ԼՈՌԻ ԲԵՐԴ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն
   1.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն
   1.2. Համայնքի ՏԻՄ-երը
   1.3. Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը
   1.4. Համայնքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունները
   1.5. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն
   1.6. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հողային հաշվեկշիռը
   1.7. Գյուղատնտեսություն
   1.8. Համայնքում առկա անասնագլխաքանակի տվյալներն ըստ առանձին բնակավայրերի
   1.9. Համայնքում առկա ինժեներական տեխնիկան և տրանսպորտային միջոցները
   1.10. Բնության և շրջակա միջավայրի պահպանություն
   1.11. Կրթություն, մշակույթ
   1.12. Աղետների ռիսկերի կառավարում
2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը
   2.1. Համայնքի հիմնահարցերի սահմանում
   2.2. Համայնքի զարգացման միտումները
3. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն (ՈՒԹՀՎ) վերլուծություն
4. Համայնքի տեսլականի, ռազմավարության և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակների սահմանում
5. Համայնքում իրականացվող ծրագրերը
   5.1 ՀԶՀԾ-ում ընդգրկված ոլորտային ծրագրերը՝ ըստ բնակավայրերի
   5.2 Առաջնահերթ ծրագրերի ընտրության, համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրերի կազմում

6.ՀԶՀԾ-ի իրականացումը, մշտադիտարկումը (մոնիթորինգը) և գնահատումը, վերահսկումը և վերանայումը:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ բազմաբնակավայր համայնքի 2023-2027թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5-րդ մասի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջները:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառում (ոլորտներում):

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Լոռի Բերդ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶՀԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է ՀՀ կառավարության կողմից համայնքների խոշորացման պետական փորձնական ծրագրի իրականացմամբ և գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և այս առումով մեծացել են համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀԶՀԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության , նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶՀԾ-ն մշակելիս ուսումնասիրվել են նաև Լոռի Բերդ բազմաբնակավայր համայնքի և նրա կազմում ընդգրկված բնակավայրերի՝ նախկին համայնքների նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման միտումները և դրանց շարունակականության հավանականությունը: ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմինը, փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար փոխըմբռնում ՀԶՀԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Հարգելի ազգաբնակչություն.
Ձեզ եմ ներկայացնում Լոռի Բերդ համայնքի 2023-2027թթ. զարգացման ծրագիրը: Համայնքի զարգացման ծրագրի մեջ ներառված են Լոռի Բերդ համայնքի կազմում ընդգրկված 9 բնակավայրերը:

Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի – սոցիալ տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում և կանխատեսում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում՝ համայնքի զարգացում, այլ կերպ ասած բավարարելով ներկայի կարիքները՝ առանց վնասելու գալիք սերունդներին:

Լոռի Բերդ համայնքի 2023-2027թթ. Զարգացման ծրագրի նպատակն է սահմանել համայնքի տեսլականը, այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի՝ կազմի

. մեջ ընդգրկված 9 բնակավայրերի առկա ռեսուրսները, պարտավորությունները, երկրի տնտեսական, քաղաքական և սոցիալական առկա իրավիճակը: Համայնքի զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծականը և գնահատումը, ՀՀԶԾ-ի հիմնական նպատակների առկայությունն ու սահմանումը, ֆինանսական իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հետագա հինգ տարիների բնականոն ընթացքն ապահովելու, ազգաբնակչության առջև ծառացած խնդիրներն լուծելու, կայուն և զարգացած համայնք ունենալու հեռանկարին հասնելու համար առաջարկում և կոչ եմ անում բոլորիս համախմբվածությունը կատարվելիք գործընթացներում, յուրաքանչյուրիդ ներգրավվածությունը համայնքի կայացման, Ձեր պարտավորությունների պատշաճ և բարեխիղճ կատարման ապահովման գործընթացներում, որպեսզի մեր համայնքի համար կարևորագույն ձեռքբերումները բոլորիս համախմբվածության և ջանասիրության արդյունքում դառնա իրականություն:

Համայնքի զարգացման հեռանկարին հասնելու համար անհրաժեշտ է համաձայնեցնել չորս հիմնական ուղղություններ, որպեսզի հասնենք կայուն զարգացման.

1. **Ապահովել տնտեսական աճ**
2. **Հասարակության ինտեգրում**
3. **Պարտավորությունների կատարում**
4. **Շրջակա միջավայրի պաշտպանություն**

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն ու հիմնական խթաններն են համարվում առավելագույնս նվազեցնել օր օրի ավելացող արտագաղթը, խթանել տարբեր շահագրգիռ անձանց, դոնոր կազմակերպությունների, անհատների, հասարակական կազմակերպությունների, բարեգործական կազմակերպությունների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի զարգացմանը:

Համայնքում՝ հետագա հինգ տարիներիընթացքում տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման և գանձման արդյունավետ հավաքագրում:
Հուսով եմ, որ սատար կկանգնեք, որպեսզի միահամուռ ուժերով կարողանանք իրականացնել մեր առջև դրված խնդիրները, համայքը դարձնենք բարեկեցիկ և զարգացած համայնք:

Կանխավ շնորհակալ եմ բոլոր այն գործարարներին, համայնքաբնակներին և շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, որոնք կնպաստեն համայնքի զարգացման ծրագրերի իրականացմանը և հասարակական կյանքի ակտիվացման գործընթացներին:

# 1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 1.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5-րդ մասի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի՝ 2017թ. նոյեմբերի 5-ին կայացած միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից հետո ՀՀ Լոռու մարզի Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ գյուղերը ընդգրկվել են Լոռի Բերդ համայնքի կազմում և վերանվանվել Լոռի Բերդ համայնքի բնակավայրեր:

Այսպիսով, ներկայում Լոռի Բերդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ գյուղերը **(աղյուսակ 1)**: Համայնքի կենտրոնը Լոռի Բերդ գյուղն է:

**Աղյուսակ 1. Համայնքի բնակավայրերի վարչական տարածքի, առկա և մշտական բնակչության, տնային տնտեսությունների ցուցանիշները (01.01.2023թ. դրությամբ).**

| Հ/Հ | Բնակավայրի անվանումը | Առկա բնակչության թվաքանակը (մարդ) | Մշտական բնակչության թվաքանակը (մարդ) | Առկա տնային տնտեսությունների թվաքանակը | Մշտական տնային տնտեսությունների թվաքանակը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ագարակ | 1237 | 1237 | 272 | 316 |
| 2. | Բովաձոր | 278 | 278 | 62 | 94 |
| 3. | Լեջան | 803 | 803 | 215 | 271 |
| 4. | Լոռի Բերդ | 442 | 442 | 128 | 134 |
| 5. | Կողես | 368 | 368 | 71 | 137 |
| 6. | Հովնանաձոր | 40 | 40 | 13 | 23 |
| 7. | Յաղդան | 351 | 351 | 77 | 98 |
| 8 | Սվերդլով | 1064 | 1064 | 250 | 285 |
| 9. | Ուռուտ | 1086 | 1086 | 237 | 280 |

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 5669 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 2816 և կանայք՝ 2853:

**Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվությունհամայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին:**

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 43կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ագրակ, Ակրակ, Էգրակ, Էքրեք անվանումները: Բնակավայրը տեղակայված է Ձորագետի ձախ ափին, սարահարթում՝ ծովի մակարդակից 1380մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամռանը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսանկյունից ընկած է մասնակի ոռոգման գոտում:

Բնակավայրը դեռևս հիշատակվում է 13-րդ դարում և մտել է Գուգարք աշխարհի Տաշիրք գավառի մեջ: Ունի 17-րդ դարում կառուցված եկեղեցի: Ագարակի մոտ գտնվում է համանուն մենաստանը: Շրջակայքում կան շատ հին բնակավայրերի, Ս> Աստվածածին եկեղեցու ավերակներ:

Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը, խոտհարքերը: Բնակավայրի մասնագիտական ուղղությունը երկրագործությունն: Զբաղվում են դաշտավարությամբ, պտղաբուծությամբ(տանձ, խնձոր, կեռաս), մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Բովաձոր բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 42կմ հեռավորության վրա: Բնակավայրի տարածքով անցնում է «Լոռվա ջրանցք» ոռոգման համակարգը: Բնակավայրը հիմնադրվել է 1820թ., ծովի մակարդակից բարձր է 1430մ:

Բնակավայրի աշխարհագրական դիրքը հարմար է, կլիմայական պայմանները անբարենպաստ: Տարվա եղանակներից անհամեմատ նպաստավոր է աշունը, ձմռանը երբեմն խստաշունչ է, ձյան քիչ ծածկույթով, գարնունը սովորաբար ուշացած է գալիս, իսկ ամառը զով, անձրևային, հաճախակի քամիներով: Լինում է նաև կարկտահարություն:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Բնակավայրն ունի մեկ միջնակարգ դպրոց, ակումբ, որը վերակառուցվել է 2001թ., 1991թ. գերմանական «Կարմիր Խաչի» կողմից բուժկետ:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՋԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 43կմ հեռավորության վրա: Բնակավայրը կազմավորվել է մոտավորապես 1850-ական թվականներին: Գտնվում է ծովի մակարդակից 1460մ բարձրության վրա: Բնակավայրի հյուսիսային կողմում սարեր են, արոտավայրեր, արևելյան կողմում մոտ 40մ խորությամբ ձորն է և անտառը, հարավային և արևմտյան կողմերում վարելահողեր են:Բնակավայրի կլիման վերջին տարիներին խիստ փոխվել է: Նախկին ձյունառատ ձյան փոխարեն ներկայումս շատ քիչ ձյուն է տեղում, գարունը ցուրտ է, ամառը՝ զով, իսկ աշունը տաք և անձրևային: Հաճախակի են կարկտային, երաշտի տարիները, որոնք մեծ վնաս են հասցնում գյուղատնտեսությանը:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Արտադրվում է ցորեն, կարտոֆիլ, կերի արմատապտուղ, բանջարաբոստանային կուլտուրաներ, միս, կաթ, մեղր, բուրդ և ձու:

Բնակավայրն ունի միջնակարգ դպրոց: Բնակավայրն ունի 5-րդ դարում կառուցված և 19-րդ դարում վերակառուցված եկեղեցի:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 38կմ հեռավորության վրա: Բնակավայրը հիմնադրվել է 1750-ական թվականներին, ծովի մակերևույթից բարձր է 1380մ: Բնակավայրը գտնվում է Լոռու մարզի Ձորագետ և Ուռուտ գետերի միջնահատվածում, պատմական «Լոռե Բերդաքաղաքի» ավերակների մոտ, պատմական նշանակություն ունեցող դամբարադաշտերի վրա: Բնակավայրիտարածքով է անցնում Ստեփանավան – Ալավերդի ավտոճանապարհը: Բնակավայրից 1կմ դեպի արևելք կառուցված է «Աշոտ - Երկաթ» պատմամշակութային ամրոցը, որտեղից գյուղացիները տեղափոխվել են այժմյան բնակավայրերը, կառուցվել է 9-11-րդ դարերում, այժմ գտնվում է կիսաավեր վիճակում: Շրջակայքում կան միջնադարյան կառույցներ՝ «Լոռե Բերդաքաղաքը»՝ 10-րդ դար, եկեղեցի 12-13-րդ դարեր, կամուրջ՝ 10-13-րդ դարեր, բաղնիք՝ 12-13-րդ դարեր, գյուղատեղիներ և եկեղեցի՝ դարմանաթաղ գյուղատեղիում, 10-րդ դար: Բնակավայրի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները անբարենպաստ են: Տարվա եղանակներից անհամեմատ լավ է աշունը, գարունը ուշ է գալիս, հաճախակի քամիներով , իսկ ամառը տաք է, լինում են նաև կարկտահարություններ: Զբաղվում են հիմնականում անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրն ունի հիմնական դպրոց:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂԵՍ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրը մարզկենտրոնից գտնվում է 52կմ հեռավորության վրա:Բնակավայրում և շրջակայքում պահպանվել են քառակող կոթողներ 5-րդ դար, եկեղեցի 11-րդ դար, գերեզմաններ խաչքարերով 12-13-րդ դարեր, կամուրջ 13-րդ դար, Տուտիկ իշխանի կառուցած հուշակոթողը 1241թ.:

Զբաղվում են անասնապահությամբ, կարտոֆիլի, հացահատիկային և կերային կուլտուրաների մշակությամբ: Բնակավայրն ունի հիմնական դպրոց:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՎՆԱՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Հովնանաձոր բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1480մ բարձրության վրա, շրջապատված է բարձր քարաժայռերով, սարադաշտերով, լանջերով ու սառնորակ աղբյուրներով: Մեծ Ական աղբյուրից բխող ինքնահոս ջուրը ապահովում է գյուղի բնակչությանը խմելու ջրով:

Բնակավայրի կլիման երկարատև ձմռանը ցուրտ է, իսկ կարճատև ամռանը՝ ոչ շատ տաք: Հաճախակի են չորոյին տարիները, անձրևային կարկտահարությունը:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Կարտոֆիլի և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՂԴԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Յաղդան բնակավայրը հիմնադրվել է 1821թ., նախկինում ունեցել է Եղիտանք հայկական անվանումը: Այստեղ հույներ են եկել Օսմանական կայսրության Մաշալա գյուղից: Այն հայտնի է որպես հունական գյուղ: Այսօր հույների թիվը զգալի պակասել է 1991թ. սկսած արտագաղթի պատճառով դեպի պատմական հայրենիք՝ Հունաստան: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 48կմ է: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1350մ բարձրության վրա: Շրջապատված է բարձր սարերով, որոնց լանջերին կան մի քանի փոքրիկ բնական աղբյուրներ:

Բնակավայրի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով:

Բնակավայրի շրջակայքում պահպանվել են եկեղեցի 17-րդ դար, մատուռներ, գերեզմանոց՝ խաչքարերով 13-17-րդ դարեր, գյուղատեղիներ, կամուրջ 13-րդ դար:

Բնակչությունը զբաղվում է ցորենի, կարտոֆիլի արտադրությամբ, անասնապահությամբ:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՎԵՐԴԼՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Սվերդլով բնակավայրը հիմնվել է 18-րդ դարի առաջին կեսին: Հիմնադիրները եղել են գյուղից 6կմ հյուսիս-արևելք գտնվող Դորբանդ կոչվող բնակավայրի բնակիչները: Բնակավայրն ավելի հին է, քան ենթադրվում է, ինչի մասին է խոսում գյուղի կենտրոնում տուֆից և բազալտից կերտած 5-7-րդ դարերի լավ պահպանված Ս. Գևորգ եկեղեցին: Եկեղեցին հիմնովին վերանորոգվել է 19-րդ դարում և հարավային մուտքի առջև կառուցվել է զանգակատուն: Եկեղեցու նեղ և ձգված դահլիճը չորս զույգ որմնանյութերով և թաղակիր կամարներով բաժանվում է հինգ հատվածի:Կիսաշրջանաձև հատակագծով խորանի երկու կողմերում աբսիդներով ուղղանկյուն ավանդատներ են:

Բնակավայրը գտնվում է Ուռուտ գետի ափին, ծովի մակերևույթից 1480մ բարձրության վրա: Բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 48կմ է: Բնակավայրի միջով հոսում է Միսխանա գետը:

Բնակավայրի կլիման ձմռանը խստաշունչ է, ամռանը՝ զով, հաճախակի տեղումներով նաև կարկուտով:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի, գարու, կարտոֆիլի, բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ, զբաղվում են նաև անասնապահությամբ:

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրը գտնվում է Ուռուտ գետի ափին, բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 43կմ է: Ուռուտ գետը պատված է եղել ուռիներով , որի պատճառով գյուղը և գետը այդպես են անվանվել: Բնակավայրը հիմնվել է 19-րդ դարի սկզբին: Ոռուտ գյուղը փռված է Մեծ քար կոչվող սարի լանջին 2 կմ երկարությամբ: Կողքով հոսում է Ուռուտ գետը:Բնակավայրի արևելյան մասում է գտնվում եկեղեցին, իսկ հարավ-արևմտյան մասում է գտնվում Սուրբ Սարգիս մատուռը:

Բնակավայրի ծովի մակերևույթից բարձր է 1450մ: Բնակավայրի կլիման ձմռանը խստաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են անձրևոտ, նաև լինում են կարկտահարություններ:

## 1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Լոռի Բերդ համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացվում են ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 15 անդամներով (ընտրված Լոռի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերից): Լոռի Բերդ համայնքի աշխատակազմը բաղկացած է 46 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը լավ է, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքը լավ է, առկա է համակարգչային տեխնիկա:

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 50-Ա որոշմամբ (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2 –ում ներկայացված է Լոռի Բերդ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակը**

Աղյուսակ 2.

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար /ՀՀ դրամ/) |
|---|---|---|---|
| | **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | |
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 360.000 |
| 2 | Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | 1 | 270.000 |
| 3 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 270.000 |
| 4 | Վարչական ղեկավար | 5 | 220.000 |
| 5 | Վարչական ղեկավար-օպերատոր | 2 | 220.000 |
| 6 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 180.000 |
| | **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ** | | |
| 7 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 270.000 |
| 8 | Աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 220.000 |
| 9 | Աշխատակազմի առաջատար մասնագետ | 4 | 180.000 |
| 10 | Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 2 | 150.000 |
| 11 | Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 6 | 120.000 |
| | **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ** | | |
| 12 | Հարկային գործակալ | 3 | 104.000 |
| 13 | Տնտեսվար | 1 | 120.000 |

| | | | |
|---|---|---|---|
| 14 | Վարորդ | 1 | 150.000 |
| 15 | Էլեկտրիկ | 0.5 | 120.000 |
| 16 | Հավաքարար | 4.5 | 104.000 |
| 17 | Բանվոր | 4.0 | 104.000 |
| 18 | Մեքենավար-օպերատոր | 1 | 104.000 |
| | **Ընդամենը՝** | **40** | **6.480.000** |

**Գծապատկեր 1-ում ներկայացված է Լոռի Բերդ համայնքի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը:**


Լոռի Բերդ համայնքի ղեկավար
Ագարակ բնակավայրի վարչական ղեկավար
Բովաձոր բնակավայրի վարչական ղեկավար
Լեջան բնակավայրի վարչական ղեկավար
Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Համայնքի ղեկավարի տեղակալ
Կողես բնակավայրի վարչական ղեկավար
Յաղդան և Հովնանաձոր բնակավայրի վարչական
Սվերդլով բնակավայրի վարչական ղեկավար
Ուռուտ բնակավայրի վարչական
Աշխատակազմի քարտուղար
Աշխատակազմի առաջատար մասնագետներ
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետներ
Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետներ
Աշխատակազմի գլխավոր մասնագետ
հարկային գործակալներ
տեխնիկական աշխատողներ

Համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 56-Ա որոշմամբ (աղյուսակ 3):

**Աղյուսակ 3. Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի համայնքային ոչ առևտրային կազմակերպություն**

| Հ/հ | Պաշտոնի անվանումը | Հաստիքային միավորը | Հաստիքների քանակը | Աշխատավարձը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1. | Տնօրեն | 1 | 1 | 150.000 |
| 2. | Դաստիարակ | 1.12 | 1 | 120.960 |
| 3. | Դաստիարակի օգնական | 1 | 1 | 104.000 |
| 4. | Հաշվապահ | 0,5 | 1 | 54.000 |
| 5. | Խոհարար | 1 | 1 | 96.000 |
| | ***Ընդամենը*** | ***4.62*** | **5** | ***524.960*** |

## 1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականությունն են հանդիսանում նրա կազմի մեջ մտնող բնակավայրերի սեփականություն համարվող գույքը:

Համայնքի սոցիալ-տնտեսական յուրաքանչյուր ենթակառուցվածքի վիճակի գնահատումը կատարվել է՝ օգտագործելով Ներդիր 1-ում բերված գնահատման չափանիշները (գնահատականները):

**Ներդիր 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վիճակի գնահատականներ**

ա) գերազանց, եթե ենթակառուցվածքը վերջերս է կառուցվել կամ վերանորոգվել, գործում է անխափան.
բ) լավ, եթե ենթակառուցվածքն իր շահագործմանը խոչընդոտող լուրջ թերություններ չունի.
գ) բավարար, եթե ենթակառուցվածքը դեռևս գործում է, բայց արդեն կապիտալ նորոգման կարիք ունի.
դ) վատ, եթե ենթակառուցվածքը գործում է ամենացածր արտադրողականությամբ կամ բոլորովին չի գործում.
ե) շատ վատ, եթե ենթակառուցվածքը քայքայված է, այն պետք է քանդել կամ փոխարինել ուրիշով:

## 1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային ենթակայության կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցությամբ արվում է ամեն հնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

## 1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի պայմանավորվածություն «Արմեն Շահինյան» ԱՁ-ի հետ, որն էլ իրականացնում է միջբնակավայրային ճանապարհներին հարակից տարածքների աղբահանությունը՝ ամսական երեք անգամյա պարբերականությամբ, իսկ ամռան ամիսներին շաբաթական մեկ անգամ:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է համայնքի անհրաժեշտ գիշերային լուսավորությանը: Բնակավայրերում լուսավորության ցանցը կառուցված է մասամբ: Համայնքիի լուսավորությունը առաջնային կարևորության հարցերից է և անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

Խմելու ջրի մատակարարումը համարվում է համայնքի կարևորագույն խնդիրներից ամենաառաջնահերթը: 2023-2024թթ. Գերմանական վերակառուցման բանկի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում կիրականացվի Լոռի Բերդ համայնքի Ագարակ և Ուռուտ բանակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ամբողջական կառուցում:

Բոլոր բնակավայրերում առկա է գերեզմանատների ցանկապատման կամ եղած ցանկապատերի թարմացման խնդիր:

## 1.6 ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ (աղյուսակ 5)

**Աղյուսակ 4. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հողային հաշվեկշիռ**

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Վարելահողերի ընդհանուր չափը (հա) | Այդ թվում՝ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Խոտհարք ընդհանուր չափը (հա) | Արոտ ընդհանուր չափը (հա) | Այլ հողատեսք ընդհանուր չափը (հա) |
| 1. | Ագարակ | 301.45 | 225.37 | 1423.91 | 283.66 |
| 2. | Բովաձոր | 357.83 | 134.93 | 439.09 | 88.06 |
| 3. | Լեջան | 544.48 | 16.63 | 1573.37 | 220.49 |
| 4. | Լոռի Բերդ | 81.91 | 69.92 | 102.98 | 131.11 |
| 5. | Կողես | 286.34 | 68.14 | 581.48 | 59.62 |
| 6. | Հովնանաձոր | 41.05 | 126.33 | 980.23 | 23.68 |
| 7. | Յաղդան | 272.15 | 57.52 | 664.45 | 124.21 |
| 8. | Սվերդլով | 662.73 | 751.51 | 1234.61 | 271.97 |
| 9. | Ուռուտ | 845.54 | 646.79 | 619.49 | 282.23 |

**Լոռի Բերդ Համայնքի վարչական տարածքը կազմում է 17041.52 հա որից՝**

| | |
|---|---|
| **Վարելահողեր** | **3393.48 հա** |
| **Խոտհարք** | **2100.76 հա** |
| **Արոտ** | **7616.94 հա** |
| **Այլ հողատեսք** | **1483.26 հա** |
| **Համայնքային սեփականության հողատեսք** | **7660.81 հա** |
| **Պետական սեփականության հողատեսք** | **4441.79 հա** |
| **Մասնավոր սեփականության հողատեսք** | **4938.91 հա** |
| **Բնակավայրերի տնամերձեր** | **510.66 հա** |

## 1.7 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակաբույսեր՝ ցորեն, գարի և այլ կուլտուրաներ: Սակայն հողատարածքների ջրովի չլինելու պատճառով համայնքաբնակները մեծ եկամուտներ չեն ստանում: Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Լոռի Բերդ համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

Համայնքաբնակները զբաղվում են նաև անասնապահությամբ, սակայն խոշոր ֆերմերային տնտեսությունները սակավաթիվ են: Հիմնականում յուրաքանչյուր տնտեսություն իր արտադրանքը սպառում է իր տնտեսության ներսում:

## 1.8 ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

**(01.01.2023թ. դրությամբ)**

| Հ/հ | Ցուցանիշները | Ագարակ | Բովաձոր | Լեջան | Լոռի Բերդ | Կողես | Յաղդան | Հովնանաձոր | Սվերդլով | Ուռուտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, որից՝ | 745 | 274 | 808 | 235 | 129 | 104 | 116 | 1038 | 1223 |
| | Կովեր | 332 | 141 | 388 | 109 | 55 | 61 | 50 | 431 | 671 |
| 2. | Խոզերի գլխաքանակը | 134 | 15 | 301 | 34 | 41 | 23 | 8 | 264 | 272 |
| 3. | Ոչխարների գլխաքանակը | 446 | 474 | 1363 | 332 | 208 | 344 | 63 | 1095 | 582 |
| 4. | Այծերի գլխաքանակը | 41 | 4 | 57 | - | - | 6 | - | - | 33 |
| 5. | Ձիերի գլխաքանակը | 42 | 10 | 28 | - | 5 | 2 | 7 | 13 | 20 |
| 6. | Հավերի և այլ թռչունների գլխաքանակը | 1906 | 365 | 2063 | 1311 | 461 | 345 | 92 | 1373 | 1685 |
| 7. | Մեղվաընտանիքների քանակը | 256 | 94 | 230 | 37 | 26 | 42 | 85 | 205 | 66 |

## 1.9 ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**(01.01.2023թ. դրությամբ)**

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ագարակ | Բովաձոր | Լեջան | Լոռի Բերդ | Կողես | Յաղդան | Հովնանաձոր | Սվերդլով | Ուռուտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Թեթև մարդատար | 150 | 24 | 160 | 41 | 69 | 30 | 7 | 175 | 101 |
| 2. | Միկրոավտոբուս | 2 | - | 1 | 1 | 1 | - | - | 1 | 1 |
| 3. | Ավտոբուս 20-35 ուղևորատար | 1 | - | - | - | - | - | - | - | - |
| 4. | ՄԱԶ | - | - | - | 1 | - | - | - | - | 1 |
| 5. | ԿԱՄԱԶ | 1 | - | - | 1 | 1 | - | - | - | - |
| 6. | ԶԻԼ | 6 | 1 | 13 | 2 | - | - | 1 | 3 | - |
| 7. | ԳԱԶ | 18 | 2 | 3 | 2 | 7 | 1 | 1 | 16 | 17 |
| 8. | Ինքնաթափ | 6 | 1 | 11 | 4 | 5 | - | - | - | 7 |
| 9. | Ջրատար | - | - | - | - | - | - | - | - | - |
| 10. | Ավտոամբարձիչ | - | - | - | - | - | - | - | - | - |
| 11. | Եռակցող ապարատ | 30 | 2 | - | - | - | 4 | 1 | - | - |

## 1.10 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է համայնքի սանմաքրումը: Համայնքը չունի կենտրոնացված աղբավայր:

Համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- բարեկարգել պուրակները,
- կառուցել կենտրոնացված աղբավայր,
- աղբի նախնական տեսակավորման համար փողոցներում տեղադրել աղբամաններ,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավորություն,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,

ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

## 1.11 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ

Լոռի Բերդ համայնքում գործում են հանրակրթական միջնակարգ 5 և հիմնական 3 դպրոցներ՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի հիմնական դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Ագարակի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Բովաձորի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Լեջանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզիԿողեսի հիմնական դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Յաղդանի հիմնական դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Սվերդլովի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ, ՀՀ Լոռու մարզի Ուռուտիմիջնակարգ դպրոց ՊՈԱԿ: Համայնքում գործում է մեկ մանկապարտեզ ՀՈԱԿ՝ Ագարակ բնակավայրում: Ավագանու որոշմամբ մանկապարտեզի ծնողական վճարի չափը սահմանված է 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

Համայնքի բնակավայրերի համայնքային կենտրոններում 2023-2024թթ. կգործեն գեղարվեստական խմբակներ՝ երեխաների զբաղվածությունը և զարգացվածությունը կազմակերպելու նպատակով: Համայնքապետարանի աշխատակազմում կնախատեսվի երկու հաստիք՝ խմբակների գործունեությունը կազմակերպելու նպատակով:

## 1.12 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Լոռի Բերդ համայնքի քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է համայնքի ղեկավարը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացան գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ: Բնակավայրերում եղած թաքստոցները հաշվառված են համայնքապետարանի կողմից: Ըստ անհրաժեշտության թաքստոցները կավելացվի բնակչության թվին համապատասխան:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետերի և 41-րդ հոդվածի պահանջներով՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման, կազմակերպական ցուցումները, ուղղությունններն ու հիմնական միջոցառումների պլանը», որը հաստատվել է Լոռի Բերդ համայնքի ղեկավարի կողմից:

Լոռի Բերդի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող բազմաֆունկցիոնալ էքսկավատրով կատարվում են գետերի հուների մաքրման աշխատանքներ, առաջացած ավազախիճը օգտագործվում է ներհամայնքային ճանապարհների հարթեցման նպատակով: Համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կատարվում են նաև ջրահեռացման վաքերի մաքրման աշխատանքներ:

## 2.ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

### 2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- ✓ Կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, զբոսայգու կառուցման աշխատանքների ավարտին հասցման և բարեկարգման անհրաժեշտություն (բոլոր բնակավայրերում)
- ✓ Ոռոգման համակարգի անբավարար վիճակ (բոլոր բնակավայրերում)
- ✓ Համայնքի խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- ✓ Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն
- ✓ Գյուղմթերքների իրացման դժվարություններ
- ✓ Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
- ✓ Ներբնակավայրային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
- ✓ Ներբնակավայրային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Գյուղատնտեսության և կոմունալ բնագավառում տեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն
- ✓ Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և ընդլայնման անհրաժեշտություն
- ✓ Համայնքի երեխաների և երիտասարդների գիտելիքների (ժամանակակից տեխնոլոգիաներ) բարձրացման անհրաժեշտություն

## 2.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Լոռի Բերդ համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, համայնքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 7.0-8.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Լոռի Բերդ համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում հումքային, սպասարկման ոլորտի, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետության և դոնոր կազմակերպությունների հետ:

# 3. ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ՈՒԹՀՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- ✓ Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները
- ✓ Բանիմաց աշխատուժի առկայություն
- ✓ Հիմնական և միջնակարգ դպրոցների առկայություն
- ✓ Տուրիզմի և զբոսաշրջության համար հետաքրքրություն ներկայացնող հնություններ, տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրերի առկայություն
- ✓ Խմելու ջրի պաշարի առկայություն
- ✓ Գազաֆիկացման առկայություն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- ✓ Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- ✓ Համայնքի ենթակառուցվածքների (փողոցներ, ջրամատակարարման ցանցեր, և այլն) ոչ բարվոք վիճակը
- ✓ Բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը
- ✓ ՏԻՄ-բնակչություն թույլ կապը
- ✓ Բիզնես ոլորտի համար ոչ բարենպաստ քաղաքականությունը

- ✓ Թերի իրազեկվածությունը տարածաշրջանում եղած պատմամշակութային վայրերի, ինչպես նաև համայնքում գործող զբոսաշրջային և հասարակական կառույցների վերաբերյալ
- ✓ Թերզբաղվածության բարձր մակարդակ

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- ✓ Զբոսաշրջության զարգացումը
- ✓ Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- ✓ Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը (հիմնական նպատակը համայնքաբնակների համար աշխատատեղերի ստեղծում)
- ✓ Անասնապահության և դաշտավարության զարգացումը

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- ✓ Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում)
- ✓ Բնակլիմայական անբարենպաստ պայմաններ
- ✓ Գործազրկության մակարդակի աճը
- ✓ Արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
- ✓ Գյուղատնտեսական մթերքների գների նվազում

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի տեսլականն է՝

***Լոռի Բերդ համայնքը բնակչությանը և զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող բազմաբնակավայր համայնք է, որտեղ զարգացած են միջազգային տուրիզմն ու էկոտուրիզմը, և որտեղ ստեղծված է ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:***

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը**՝

- ✓ Ապահովել համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի՝ համամասնական զարգացումը
- ✓ Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ
- ✓ Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- ✓ Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- ✓ Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- ✓ Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների հետ
- ✓ Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը
- ✓ Բարձրացնել բնակչության կենսամակարդակը՝ ընդլայնելով մատուցվող հանրային ծառայությունների որակն ու շրջանակը:

**Համայնքի զարգացման 2023-2027թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակններն են՝**

- ✓ Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- ✓ Բարձրացնել նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը
- ✓ Բարելավել խմելու ջրի ջրամատակարարման ծառայությունների որակը
- ✓ Ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝ չխախտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը, խուսափել հիվանդություններից և համաճարակներից

- ✓ Համայնքը դարձնել ավելի հետաքրքիր, հրապուրիչ և հարմարավետ զբոսաշրջիկների համար
- ✓ Ունենալ բազմաֆունկցիոնալ կանգառներ
- ✓ Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը
- ✓ Համայնքի բնակիչներին և զբոսաշրջիկներին ապահովել նրանց հանգստի կազմակերպման, շփումների ապահովման հաճելի պայմաններով
- ✓ Ունենալ բարեկարգ և մարմնամարզական գործիքներով հագեցած գործող սպորտային ենթակառուցվածքներ
- ✓ Ունենալ բարեկարգ զբոսայգիներ
- ✓ Արդյունավետ օգտագործել ոռոգման ջրի պաշարները
- ✓ Նպաստել գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը՝ ունենալով հագեցած գյուղատնտեսական տեխնիկա:

**Համայնքի զարգացման 2023-2023թթ. հնգամյա ծրագրի հիմնական ուղղություններն են՝**

- Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում
- Համայնքում անասնապահության զարգացում և անասնապահական մթերքների արտադրության ծավալների աստիճանական մեծացում՝ անասնագլխաքանակի տարեցտարի ավելացում և անհրաժեշտ քանակությամբ անասնակերի ապահովման միջոցով
- Համայնքի ատարածքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ՔՀՄՀ-ի կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում
- Համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ զբոսաշրջիկիների գիշերակացի տնային պայմանների ապահովման, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների ստեղծման, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում ՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով
- Համայնքի ՏԻՄ-երի, աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում
- Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ներգրավվածության բարելավում՝ բնակիչների մասնակցության ձևերիներդրման և զարգացման միջոցով:
- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում

# 5.ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

## 1.1 ՀՀՀԾ-ՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ՝ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

### ԾՐԱԳԻՐ 1

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում** | |
| 1 | Ագարակ | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 130,0 |
| 2 | Բովաձոր | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 20,0 |
| 3 | Լոռի Բերդ | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 30,0 |
| 4 | Լեջան | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 80,0 |
| 5 | Կողես | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 50,0 |
| 6 | Յաղդան | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 20,0 |
| 7 | Սվերդլով | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 60,0 |
| 8 | Ուռուտ | Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում/սալարկում | 110,0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի ներդրում՝** | **225,0** |
| | | **Սուբվենցիա՝** | **275,0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **500,0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | 75.0 | 100.0 | 110.0 | 115.0 | 100.0 |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | **Ընդամենը՝** | | | | | |

### ԾՐԱԳԻՐ 2

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի բնակավայրերի գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում** | |
| 1 | Ագարակ | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 60.0 |
| 2 | Բովաձոր | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 5.0 |
| 3 | Լոռի Բերդ | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 5.0 |
| 4 | Լեջան | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 40.0 |
| 5 | Կողես | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 20.0 |
| 6 | Հովնանաձոր | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 5.0 |
| 7 | Յաղդան | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 20.0 |
| 8 | Սվերդլով | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 40.0 |
| 9 | Ուռուտ | գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում | 5.0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի ներդրում՝** | **90.0** |
| | | **Սուբվենցիա՝** | **110.0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **200.0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | 60.0 | 70.0 | 70.0 | | |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | Ընդամենը՝ | | | | | |

ԾՐԱԳԻՐ 3

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի բնակավայրերում էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում** | |
| 1 | Ագարակ | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 60,0 |
| 2 | Բովաձոր | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 60,0 |
| 3 | Լոռի Բերդ | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 20,0 |
| 4 | Լեջան | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 60,0 |
| 5 | Կողես | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 60,0 |
| 6 | Յաղդան | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 20,0 |
| 7 | Սվերդլով | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 60,0 |
| 8 | Ուռուտ | էլեկտրական պոմպակայանների և ոռոգման համակարգերի կառուցում, արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 60,0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի ներդրում՝** | **140,0** |
| | | **Սուբվենցիա՝** | **260,0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **400,0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | Ընդամենը՝ | | | | | |

ԾՐԱԳԻՐ 4

| Հ/հ | Բնակավայրի | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր |
|---|---|---|---|

| | անվանումը | | արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի բնակավայրերի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում** | |
| 1 | Ագարակ | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 15,0 |
| 2 | Բովաձոր | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 30.0 |
| 3 | Լոռի Բերդ | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 30.0 |
| 4 | Լեջան | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 20.0 |
| 5 | Կողես | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 30.0 |
| 6 | Յաղդան | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 30.0 |
| 7 | Սվերդլով | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 20,0 |
| 8 | Ուռուտ | մանկապարտեզի շենքի հիմնանորոգում | 25,0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի ներդրում՝** | **60.0** |
| | | **Սուբվենցիա՝** | **140.0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **200.0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | **60.0** | | | **80.0** | **60.0** |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | **Ընդամենը՝** | | | | | |

## ԾՐԱԳԻՐ 5

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Սպորտային հրապարակների կառուցում և կահավորում** | |
| 1 | Ագարակ | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 7,0 |
| 2 | Բովաձոր | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 4,0 |
| 3 | Լոռի Բերդ | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 4,0 |
| 4 | Լեջան | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 5,0 |
| 5 | Կողես | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 4,0 |
| 6 | Հովնանաձոր | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 2,0 |
| 7 | Յաղդան | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 4,0 |
| 8 | Սվերդլով | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 5,0 |
| 9 | Ուռուտ | սպորտային հրապարակի կառուցում և կահավորում | 5,0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի ներդրում՝** | **22,0** |
| | | **Սուբվենցիա՝** | **18,0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **40,0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | **Ընդամենը՝** | | | | | |

ԾՐԱԳԻՐ 6

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի բնակավայրերում 240 ԿՎ հզորության արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում** | |
| 1 | Ագարակ | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 10.0 |
| 2 | Բովաձոր | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 6.0 |
| 3 | Լոռի Բերդ | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 10.0 |
| 4 | Լեջան | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 10.0 |
| 5 | Կողես | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 6.0 |
| 6 | Հովնանաձոր | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 3.0 |
| 7 | Յաղդան | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 10.0 |
| 8 | Սվերդլով | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 15.0 |
| 9 | Ուռուտ | արևային ֆոտոոլտային կայանների տեղադրում | 10.0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի ներդրում՝** | **36,0** |
| | | **Սուբվենցիա՝** | **44,0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **80,0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | | **20.0** | **20.0** | **20.0** | **20.0** |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | **Ընդամենը՝** | | | | | |

ԾՐԱԳԻՐ 7

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի կարիքների համար գյուղտեխնիկայի և կոմունալ տեխնիկայի ձեռքբերում** | |
| 1 | Լոռի Բերդ | Ավտոաշտարակ | 20,0 |
| | | Հացահատիկային կոմբայն | 45,0 |
| | | Բոբկատ | 25,0 |
| | | Միկրոավտոբուս / 2 միավոր | 40.0 |
| **Ընդամենը՝** | | **Այլ ներդրող՝** | **50,0** |
| | | **Համայնքի ներդրում՝** | **44.0** |
| | | **Սուբվենցիա՝** | **36,0** |
| | | **Ծրագրի ընդհանուր արժեք՝** | **130,0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ | | 40.0 | 65.0 | 25.0 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | այդ թվում՝ | | | | | |
| Բ. | **ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ,** այդ թվում՝ | | | | | |
| | **Ընդամենը՝** | | | | | |

## ԾՐԱԳԻՐ 8

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի բնակավայրերում աղբամանների տեղադրում** | |
| 1 | Լոռի Բերդ համայնքի Ագարակ, Բովաձոր, Լոռի Բերդ, Լեջան, Կողես, Հովնանաձոր, Յաղդան, Սվերդլով և Ուռուտ բնակավայրեր | **Համայնքի բնակավայրերում աղբամանների տեղադրում** | 11.0 |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի բյուջեի միջոցների հաշվին՝** | **11.0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ** այդ թվում՝ | **3.0** | **2.0** | **2.0** | **2.0** | **2.0** |
| Բ. | **ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ,** այդ թվում՝ | | | | | |
| | **Ընդամենը՝** | | | | | |

## ԾՐԱԳԻՐ 9

| Հ/հ | Բնակավայրի անվանումը | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ) |
|---|---|---|---|
| | | **Համայնքի բնակավայրերի համար գեղազարդային (դեկորատիվ) ծառերի և թփերի գնում** | ***1.0*** |
| 1 | Լոռի Բերդ համայնքի Ագարակ, Բովաձոր, Լոռի Բերդ, Լեջան, Կողես, Հովնանաձոր, | **Համայնքի բնակավայրերի համար գեղազարդային (դեկորատիվ) ծառերի և թփերի գնում** | 5.0 |

| | | | |
|---|---|---|---|
| | Յաղդան, Սվերդլով և Ուռուտ բնակավայրեր | | |
| **Ընդամենը՝** | | **Համայնքի բյուջեի միջոցների հաշվին՝** | **5.0** |

**ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման**

| Հ/հ | Ծրագրի ծախսերը | Կանխատեսվող ժամանակահատվածը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
| Ա. | ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ<br>այդ թվում՝ | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 |
| Բ. | ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | | | | | |
| | Ընդամենը՝ | | | | | |

**Մշակույթ և կրոն**

(Ոլորտի անվանումը)

v Բարեկարգում v Համայնքի բյուջեի միջոցների հաշվին

**Ծրագրի հիմնավորումը**

Լոռի Բերդ համայնքի որոշ բնակավայրերի եկեղեցիների տարածքները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Ծրագրի իրականացումը միտված է բնակչության հոգևոր մշակութային արժեքների բարձրացմանը:

***Ծրագրի նպատակները***

*Հնարավորություն ստեղծել Լոռի Բերդ համայնքի բնակավայրերի բնակչության հոգևոր արժեքների պահպանման համար:*

**Կանխատեսվող ժամանակահատվածը**
**Ծրագրի ընդհանուր արժեքը (մլն. դրամ)**

| **Բնակավայրի անվանումը** | **Ծրագրի անվանումը** | 2023 | 2024 | 2025 | 2026 | 2027 |
|---|---|---|---|---|---|---|
| **Ագարակ** | Եկեղեցու տարածքի բարեկարգում | | 2.5 | | | |
| **Սվերդլով** | Եկեղեցու տարածքի բարեկարգում | | 2.5 | | | |

## 5.2 ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Ծրագրերի առաջնահերթությունները սահմանվել և ընտրվել են համայնքի ոլորտային ծրագրերի ամփոփագրում ներկայացվել են ըստ բնակավայրերի առաջնահերթ ոլորտային այն ծրագրերը, որոնք գալիք հինգ տարիների կանխատեսվող ֆինանսական միջոցների շրջանակներում հնարավոր կլինի իրականացնել:
Ընդ որում ծրագրերն ի սկզբանե առանձնացվել և ներկայացվել են ըստ հետևյալ խմբերի՝

- Պարտադիր իրականացվող ծրագրեր
- Առկա համագործակցության շրջանակում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի ցանկ
- Ըստ բնակավայրերի առաջնահերթության ոլորտային ծրագրերի ցանկ

**Պարտադիր իրականացվող ծրագրերն** ըստ առաջնահերթության չեն գնահատվել: Դրանք ի սկզբանե դիտարկվել են որպես առաջնահերթ և պարտադիր կատարման ենթակա:

**Առկա համագործակցութան շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերը** նույնպես ըստ առաջնահերթության չեն գնահատվել: Պատճառն այն է, որ այդ ծրագրերն արդեն ընտրված և որոշված են եղել նախքան ՀԶՀԾ-ի մշակումը: Բացի այդ նշյալ ծրագրերը ժամանակին ընտրելիս կիրառվել է բնակիչների մասնակցությունն ապահովող տարբեր գործիքակազմ և դրանք ընտրվել են՝ հաշվի առնելով համայնքի բնակիչների կարծիքը:

**Ըստ բնակավայրերի ոլորտային ծրագրերը** գնահատվել են ըստ առաջնահերթության: Ընդ որում, յուրաքանչյուր բնակավայրի ծրագրերը գնահատվել են առանձին՝ ըստ սահմանված չափորոշիչների: Այնուհետև, ընտրվել և համայնքի ոլորտային ծրագրերի աղյուսակում ներկայացվել է յուրաքանչյուր բնակավայրից առաջնահերթություն շահած այնքան ծրագիր, որի իրականացման համար բավարարում են գալիք հինգ տարվա կանխատեսումների շրջանակներում տվյալ բնակավայրին բաժին հասնող ֆինանսական միջոցները: Հինգ տարվա կտրվածքով տվյալ բնակավայրին բաժին հասնող ֆինանսական միջոցների չափը որոշելու համար՝ որոշվել է գալիք հինգ տարիների կտրվածքով համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի չափը, որը նախատեսվում է ծախսել պլանավորվող հինգ տարիների ընթացքում: Գնահատված ընդհանուր մուտքերից հանվել են հինգ տարվա ընթացքում պարտադիր իրականացվող ծրագրերի համար անհրաժեշտ գումարները, ինչպես նաև առկա համագործակցության շրջանակներում իրականացվող և ընթացքի մեջ գտնվող ծրագրերի գծով համայնքի բյուջեից հատկացվող համաֆինանսավորման գումարները: Արդյունքում՝ մնացյալ գումարները բաշխվել են համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի միջև՝ հաշվի առնելով հաշվի առնելով համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի բնակիչների թվաքանակը: Այսինքն՝ գումարները մոտավորապես բաշխվել են համայնքի ընդհանուր բնակչության կազմում յուրաքանչյուր բնակավայրի բնակչության տեսակարար կշռին համամասնորեն:

## 2. ՀՁՀԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ) ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

### ՀՁՀԾ –ի իրականացումը

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազման հիմքը **ՀՁՀԾ-ում** համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, **ՀՁՀԾ-ի** իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

### ՀՁՀԾ –ի մշտադիտարկումը (մոնիթորինգը)

**ՀՁՀԾ-ի** մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային և բնակավայրային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների:

**ՀԶՀԾ-ում ներառված ծրագրերի միջոցառումների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ տեղեկատվության ներկայացման ձևանմուշը**

| Ոլորտ. | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր. | | | | | |
| Միջոցառում. | | | | | |
| Արդյունքային ցուցանիշները | | 2023թ., 1-ին կիսամյակ / տարեկան | | | |
| տեսակը | անվանումը | պլան. | փաստ. | շեղում | մեկնաբանություն |
| Մուտքային | | | | | |
| Ելքային (քանակական) | | | | | |
| Ելքային (որակական) | | | | | |
| Ելքային (ժամկետայնության) | | | | | |
| Արդյունավետության | | | | | |
| Ծախսեր, հազար դրամ | | | | | |

**ՀԶՀԾ-ի** ներքին մոնիթորինգի արդյունքները փաստաթղթի տեսքով համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կներկայացնի համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

**ՀԶՀԾ –ի վերահսկումը**

**ՀԶՀԾ –ի** վերահսկողությունը ապահովում է **ՀԶՀԾ –ում** ներառված ծրագրերի ամբողջական իրականացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն առաջադրված խնդիրները կատարելու, ակնկալվող արդյունքները ձեռք բերելու և սահմանված նպատակներին հասնելու համար, ծրագրերի պաշտպանվածությունը սխալներից ու ձախողումներից, ժամանակին ու ճշգրիտ տեղեկատվության ստացումը ՏԻՄ-երի հիմնավորված որոշումների կայացման համար:

**ՀԶՀԾ –ի վերահսկողությունը ենթադրում է՝**

- **ՀԶՀԾ –ի** մշակման, քննարկման և իրականացման ընթացակարգերի հստակ պահպանում,
- Ոլորտային ծրագրերով առաջադրված խնդիրների կատարման արդյունքների ստուգում,
- Ոլորտային ծրագրերի պահանջներից շեղումների պարզաբանում և պատճառների բացահայտում,
- **ՀԶՀԾ –ի** ծրագրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփում և համադրում ծրագրերի նպատակների, խնդիրների և նախատեսված արդյունքների հետ:

- **ՀԶՀԾ -ի** վերահսկողության արդյունքները ներկայացվում են համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

**ՀԶՀԾ -ի տարեկան և հնգամյա գնահատումը**

**ՀԶՀԾ-ի** իրականացման տարեկան կամ հնգամյա գնահատումը կատարվում է հիմնվելով **ՀԶՀԾ-ի** կիսամյակային մոնիթորինգների արդյունքների վրա:

Համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացնում է **ՀԶՀԾ-ի** իրականացման տարեկան հաշվետվության աշխատանքային քննարկումներ, այնուհետև՝ համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում կազմակերպում և անցկացնում է **ՀԶՀԾ-ի** իրականացման տարեկան հաշվետվության նախագծի հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով տվյալ բնակավայրին վերաբերող ծրագրերի ու միջոցառումների իրականացման հարցերին:

Բոլոր բնակավայրերում անցկացված հանրային քննարկումների արդյունքներով, **ՀԶՀԾ-ի** իրականացման տարեկան հաշվետվության լրամշակված նախագիծը և դրան կից փաստաթղթերը համայնքի ղեկավարը ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և որոշման կայացմանը:

**ՀԶՀԾ-ի** իրականացման տարեկան հաշվետվության նախագծի կազման, քննարկման, և որոշման կայացման վերաբերյալ ընթացակարգերը նույնությամբ վերաբերում են նաև **ՀԶՀԾ-ի** իրականացման հնգամյա հաշվետվության նախագծի կազմմանը, քննարկմանը և որոշման կայացմանը:

**ՀԶՀԾ-ի վերանայումը**

Հիմնվելով **ՀԶՀԾ-ի** իրականացման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու կայացրած որոշման վրա, **ՀԶՀԾ-ի** վերանայման անհրաժեշտության դեպքում, համայնքի ղեկավարը **ՀԶՀԾ-ում** փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ իր և (կամ) համայնքի ավագանու անդամներից ստացված բոլոր առաջարկությունները ներկայացնում է համայնքի ավագանու քննարկմանը և հաստատմանը:

Համայնքի ավագանու անդամի կամ անդամների առաջարկած այն փոփոխությունները և կամ լրացումները, որոնք ավելացնում են **ՀԶՀԾ-ի** իրականացման ծախսերը, համայնքի ավագանու որոշմամբ ընդունվում են միայն համայնքի ղեկավարի եզրակացության առկայությամբ և ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդով:

**ՀԶՀԾ-ի** փոփոխությունները և կամ լրացումները, ավագանու հաստատումից հետո, հրապարակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ԵԶՐԱՓԱԿՈՒՄ**

**ՀԶՀԾ-ն** հանդիսանալու է համայնքի գալիք հինգ տարիների գործունեության ուղեցույցը: 2023-2027թթ. ընթացքում **ՀԶՀԾ-ում** ընդգրկված ծրագրերի իրականացմանն են ուղղված լինելու համայնքի ՏԻՄ-երի ջանքերն ու աշխատանքը՝ մոբիլիզացնելով համայնքի ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսների ողջ պոտենցիալը: **ՀԶՀԾ-ի** իրագործումը հնարավորություն կտա քայլ առ քայլ մոտենալ հեռվում նշմարվող այն ցանկալի տեսլականին, որպիսին ցանկանում է տեսնել համայնքը նրա յուրաքանչյուր բնակիչ: **ՀԶՀԾ-ում** տեղ գտած դրույթները լինելու են այն ծրագրային հիմքը, որի վրա հենվելով կազմվելու է համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեն:

Ծրագիրը հաջողությամբ իրագործելու համար ՏԻՄ-երը պետք է սերտորեն և արդյունավետ համագործակցեն պատական կառույցների, միջազգային դոնոր կազմակերպությունների, տեղական ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի և կառույցների հետ:

**ՀԶՀԾ-ի** իրականացման հսկողությունը և ներքին վերահսկողության արդյունքները կներկայացվեն համայնքի ավագանուն՝ ի գիտություն:

Համայնքում՝ հետագա հինգ տարիների ընթացքում տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականցնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, որ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման և գանձման արդյունավետ հավաքագրում:

Յուրաքանչյուր հաջորդ տարի կկատարվի **ՀԶՀԾ-ի** իրականացման նախորդ տարվա արդյունքների ուսումնասիրություն, ամփոփում, ձեռքբերումների գնահատում և թերությունների բացահայտում: Նախորդ տարվա արդյունքների հիման վրա համապատասխան ուղղումներ և լրացումներ կկատարվեն մնացյալ տարիների ծրագրերում:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ